ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

«01» 10 2014 թ. Թիվ 1/998Ա

Երևան

ՈՐՈՇՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ն 2014 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել 100,000 հատ, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 3 տարի շրջանառելիության ժամկետով, 10% տարեկան անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնների կիսամյակային վճարմամբ, «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ կողմից գործընկեր ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկերից բխող պահանջի իրավունքի գրավով ապահովված արժեկտրոնային պարտատոմսերի ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2014 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 43 արձանագրություն)՝

Որոշում եմ՝

1. Գրանցել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից 2014 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկ ներկայացված 100,000 հատ, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 3 տարի շրջանառելիության ժամկետով, 10% տարեկան անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնների կիսամյակային վճարմամբ, «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ կողմից գործընկեր ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկերից բխող պահանջի իրավունքի գրավով ապահովված արժեկտրոնային պարտատոմսերի ազդագիրը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ